ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N15-16-3

ՀՖՖ

ՖՈՒՏԶԱԼԻ և ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

23 դեկտեմբերի 2015թ ք. Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ս.Ավետիսյանի

Կոմիտեի անդամներ	Ս.Ավետիսյան Ռ.Նազարեթյան Լ.Հայրապետյան
Քարտուղար՝	Խ.Զարգարյան

ՕՐԱԿԱՐԳ

1. 2015-2016թթ Ֆուտզալի առաջնության մրցավարության խնդիրների քննարկում /Զեկուցող Խ.Զարգարյանը/
2. ՀՖՖ-ի Արտոնագրման բաժնի ծառայողական գրության քննարկում /Զեկուցող Խ.Զարգարյանը/
3. Կանանց ֆուտբոլի <<Հրազդան Ա.Հ>> թիմի մարզիչի հետագա աշխատանքի վերաբերյալ: /Զեկուցող Խ.Զարգարյան/
4. Կանանց ֆուտբոլի տարվա ընթացքում ստուգողական մրցաշարերի մասին:/Զեկուցող Լ.Հայրապետյան/
5. Ֆուտզալի և կանանց ֆուտբոլի դիպլոմների դիզայնի մասին /Զեկուցող Խ.Զարգարյանը/

1. Հարցի վերաբերյալ արտահայտվեցին Ս.Ավետիսյանը Ռ.Նազարեթյանը և Խորեն Զարգարյանը:
   Որոշվեց առաջարկել ՀՖՖ գործադիր տնօրեն առաջին փոխնախագահ Ա.Մինասյանին որպեսզի 2015-2016թթ ֆուտզալի առաջնության հունվարի ընդմիջման ժամանակ մրցավարական բաժնի միջոցով անցկացվեն սեմինարներ տեսուչների և մրցավարների համար, որից հետո մրցավարները և տեսուչները հանձնեն քննություն: Վերլուծելով տուրի արդյունքները մրցավարների, տեսուչների թույլ տված սխալների կամ թերացումների համար կիրառվեն սանկցիաներ և համապատասխան ինֆորմացիան ներկայացվի ՄԿԱ բաժնի ֆուտզալի և Կանանց ֆուտբոլի բաժանմունք:
2. Հարցի վերաբերյալ արտահայտվեցին Ս.Ավետիսյանը, Ռ.Նազարեթյանը, Լ.Հայրապետյանը և Խ.Զարգարյանը: Որոշեց միաձայն ՈՒԵՖԱ-ի կողմից կազմակերպվող B լիցենզիայի սեմինարին գործուղել Ֆուտզալի և Կանանց ֆուտբոլի բաժան-մունքի պետ Խ. Զարգարյանին և Ֆուտզալի ազգային հավաքականի գլխ. մարզիչ Ռ. Նազարեթյանին:
3. Հարցի վերաբերյալ արտահայտվեցին Խ.Զարգարյանը, Ս.Ավետիսյանը Լ.Հայրապետյանը:
   Որոշվեց դիմել ՀՖՖ ղեկավարությանը Արթուր Հարությունյանին ընդունել աշխատանքի ՀՖՖ-ում <<Հրազդան Ա.Հ >> թիմում, որպես մարզիչ 2016թ հունվարի 1-ից:
4. Հարցի վերաբերյալ արտահայտվեցին Լ.Հայրապետյանը, Խ.Զարգարյանը Ս.Ավետիսյանը:

   Որոշվեց առաջարկել ՀՖՖ-ի ՄԿԱ բաժնին, որ այն մարզիչները, որոնք տարվա ստուգողական մրցաշարերի ընթացքում առաջնթաց չեն գրանցի կամ բաժանմունքի կողմից անցկացվող ստուգումների ընթացքում երեք անգամ չեն ապահովի իրենց թիմերում գրանցված ֆուտբոլիստների քանակը, կառաջարկվի հեռացվել ՀՖՖ-ի իրենց մարզչական աշխատանքից:

Առաջարկվեց յուրաքանչյուր տարվա վերջին ամփոփելով կանանց ֆուտբոլի չորս ստուգողական մրցաշարերը սահմանել հաղթող թիմի, լավագույն մարզչի, ֆուտբոլիստի, ռմբարկուի մրցանակներ և դրամական պարգև.

- Հաղթող թիմ՝ 100.000 դր,
- Մարզիչ՝ 100.000 դր.
- Լավագույն ֆուտբոլիստ՝ 50.000 դր.
- Լավագույն ռմբարկու՝ 50.000 դր.

5. Հարցի վերաբերյալ արտահայտվեցին Խ.Զարգարյանը, Ս.Ավետիսյանը, Ռ.Նազարեթյանը Լ.Հայրապետյանը:

Որոշվեց դիմել ՀՖՖ գործադիր տնօրեն առաջին փոխնախագահ Ա.Մինասյանին հրահանգել համապատասխան բաժնին առաջարկություն ներկայացնել դիպլոմների ձևի փոփոխության համար:

Նախագահ	**Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Քարտուղար	**Խ.ԶԱՐԳԱՐՅԱՆ**